№ 232 Դեկտեմբերի 12 (24) 1881 Դեկտեմբերի 12 (24) № 232

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողին 2 կոպէկ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ „ՄՇԱԿ“

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԼՐԱԳԻՐԸ

ԵԿՈՂ **1882** ԹԻՆ

(ՏԱՍՆԵՒՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Կը հրատարակվի նոյն գիրքով և նոյն պրոգրամմայով։

ՊՐՕԳՐԱՄԱ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II. Առաջնորդող յօդուածներ, III. Ներքին տեսութիւն, IV. Արտաքին տեսութիւն, V. Խառն լուրեր, VI. Հեռագիրներ, VII. Ֆելիետոն կամ Բանասիրական, VIII. Յայտարարութիւններ։

ԼՐԱԳՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ, 10 ռուբլ է, կէս տարվան 6 ռ., իւրաքանչիւր ամսին 1 ռուբլ։ Հատով համարները 5 կոպէկ։

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետևեալ հասցէով. Тифлисъ, редакція «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Համալսարանականները ժողովրդի մէջ։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ֆրանսիա։ Նամակ Թիւրքիայից։ Արտաքին լուրեր։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Դաւիթ բէկ։

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԷՋ

—

Որքան ժամանակ է արդէն որ մեր երիտասարդութիւնը համալսարաններում ուսում է ստանում և վերադառնում է հայրենիքը։ Այդ երիտասարդների մեծ մասը իրանք գիւղացիների որդիներ են, բայց միշտ աշխատում են, ուսում աւարտելուց յետոյ, զետեղվել մեծ քաղաքներում, գլխաւորապէս Թիֆլիսում, բայց իրանց արժանաւորութենից ստոր են համարում վերադառնալ այն գիւղը, որտեղ ծնված են, գործել այն շրջանի մէջ, որին իրանք պատկանում են։

Իսկ եթէ նրանցից մի քանիս պատահմամբ վերադառնում են գիւղը և հանգամանքների շնորհով ստիպված են ապրել գիւղերում, նրանք սկսում են արհամարհանքով վերաբերվել դէպի հայ գիւղացին, դէպի նրա կեանքը, նրա բարք ու վարքը, կարծես թէ իրանք նոյն շրջանին չեն պատկանում, իրանք նոյն շրջանից չեն դուրս եկել....

Մի հայ գիւղացու, աղքատ արուեստաւորի, փոքր վաճառականի որդին, համալսարանական ուսում ստանալուց յետոյ, վերադառնալով հայոց գիւղը, իրան կատարելապէս օտարացած է զգում հայ գիւղացու կեանքից, արհամարհանքով և զզուանքով է նայում գիւղացիների վրա, իրան արիստոկրատ, բարձր իդէալների տէր մարդ է համարում։ Համալսարանական ուսումը, փոխանակ նրա մէջ զարգացնելու գիտողութեան ընդունակութիւնը, իր թշուառ և տգէտ հայրենակիցներին իր կարողութեան չափ օգնելու ցանկութիւնը,—խորթացնում է նրան այն շրջանից, որին ինքն է պատկանում իր ծագումով։ Մեր համալսարանականը ընդունակ չէ նկատել գիւղացու պահանջները, դիտել նրա կեանքի իդէալները, հոգեբանապէս քննել հայ գիւղացու կեանքի նուրբ կողմերը. նրա աչքին ընկնում է միմիայն գիւղացու տգիտութիւնը, նրա կօպտութիւնը, նրա կեղտը։ Եւ ահա մեր համալսարանականը զզուանքով յետ է դարձնում իր երեսը շինական աշխատասէր հայից և փոխանակ դիտել, ուսումնասիրել նրան և աշխատել օգնել նրան, սկսում է համեմատել գիւղի կեանքը մայրաքաղաքի կեանքի հետ, յիշում է համալսարանը, դասախօսութիւնները, թատրոնը, իտալական օպերան, համերգները, լրագիրներում կարդացած գամբեստայի ճառերը և այլն։

Գոնէ մեր համալսարանականները հետևէին ռուս համալսարանականների օրինակին, որոնք ցրվելով գիւղերում, դիտում են ժողովրդի կեանքը, ուսումնասիրում են նրան և ներկայացնում են ռուս ժամանակակից գրականութեանը գեղեցիկ վէպեր և պատկերներ ժողովրդական կեանքից, որոնց մէջ նուրբ կերպով քննված է թշուառ, աղքատ, տգէտ ժողովրդի կեանքի հոգեբանական կողմը.... Այդ տեսակ վէպիկներով լի են այժմ ռուս ամսագիրները, մանաւանդ „Отечественныя Записки“ ամսագիրը։

Եւ ինչքան գործ կայ մի համալսարանական մարդու համար գիւղերում։ Նա կարող է ազդել ժողովրդի վրա, ծնեցնելով նրա մէջ ցանկութիւնը դպրոց հիմնելու, ճանապարհ ցոյց տալով նրան իրագործելու այդ ձեռնարկութիւնը, կարող է առաջնորդել նրան այլ և այլ ընկերակցութիւններ հաստատելու մէջ, ինչպէս օրինակ արդիւնաբերող ընկերակցութիւններ, կամ այժմ, երբ գիւղացիները պէտք է հողերը յետ գնեն կալուածատէրերից, նա կարող է իր խորհրդներով օգնել գիւղացիներին կազմել այնպիսի ընկերակցութիւններ, որոնց օգնութեամբ ընդհանուր այժերով յետ կը գնէին կալուածատէրերից համայնքի հողեր և յետոյ կը բաժանէին իրանց մէջ հողերի կտորները, և այլն։

Բայց այն երևոյթը, որ մեր համալսարանականները, մեր բարձր ուսում ստացածները փախչում են գիւղերից, կամ եթէ հանգամանքի շնորհով ստիպված են լինում գիւղում, ժողովրդի մէջ ապրել, արհամարհանքով են վերաբերվում դէպի հայ ժողովուրդը,—ամենալաւ ապացոյց է, որ իրանք անգիտակցական կերպով զգում են թէ անընդունակ են, անպատրաստ են ժողովրդին օգնելու, նրան իր կեանքի բարւոքման գործի մէջ առաջնորդելու, անընդունակ են, մինչև անգամ դիտելու, ուսումնասիրելու հայ գիւղացու կեանքը։

Կենտրոնանալով մայրաքաղաքում, Թիֆլիսում, նրանք, այդպիսով պարզ խոստովանվում են իրանց թուլութեան, անընդունակութեան մէջ ժողովրդի, ամբոխի համար գործելու։ Իսկ այստեղ, նոյն բարձր ուսում ստացած գիւղացիները աշխատում են ամեն բան, ազգային և հասարակական

ԴԱՒԻԹ ԲԷԿ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

(1722—1728)

—

ԺԸ.

Զեմո բերդի մէջ բնակվող, գինեվաճառ տիկին Սառայի ներքնատան սենեակներից այս գիշեր միայն մէկը լուսաւորված էր։ Բայց դրսից լոյս ամենևին չէր երևում։ Նրա երկու հատիկ նեղ լուսամուտները, որ բացված էին դէպի բակը, այնքան ցած էին, որ հաւասարվում էին բակի յատակի մակերևոյթին։ Այդ լուսամուտները պատած էին հաստ, կապտագոյն թղթով, այնպէս որ, դրսից անկարելի էր մի բան նշմարել ներքնատան մէջ, առանց թուղթը պատռելու։

Այդ դերեզմանի պէս լուռ, մռնչ, խոնաւ սենեակը, որ հոտում էր գինու ու արաղի կծու արտաշնչութեամբ, այս գիշեր այն տեսարանը չէր ներկայացնում, ինչ որ տեսանք այստեղ նախընթաց գիշերում։ Ոչ տէր Աւետիքը, ոչ Խորէն հայր սուրբը, ոչ Ստեփանոս իշխանը և ոչ էլ Մելիք-Փարսադանի որդի Բալի զօրավարը, դրանցից և ոչ մէկը չէր երևում։ Չէր երևում և տան տիկինը, որ նախընթաց գիշերը իր ձեռքով խորոված ի շամփուրները ներս էր բերում և իր հիւրերին պատվում էր իր պահած ամենապատուական խմիչքներով։ Տան փոքրիկ երեխան անգամ տանը չէր, նրա ձայնը չէր լսվում։

Միայն աշտանակի վրա դրած խեցեղէն ճրագը, որ իր ձեով նմանում էր աղաւնու, և որի կտուցի միջից դուրս թողած պատրոյգը իւղի պակասութեան պատճառով աղօտ կերպով վառվում էր,— միայն այդ ճրագը ցոյց էր տալիս փոքր ի շատէ կեանքի նշոյլ, բայց յայտնի չէր, թէ ումն էր սպասում նա։

Վերջապէս բակի դռան փականքը շարժվեցաւ, փեղկերից մէկը կամաց բացվեցաւ, մի մարդ լռութեամբ ներս մտաւ։ Նա զգուշութեամբ կողպեց իր ետևից դուռը և դիմեց դէպի ներքնատունը։ Սենեակի դատարկութիւնը, երևի, վատ տպաւորութիւն գործեց նրա վրա, որ կարելի էր իսկոյն նկատել այն մռայլ տխրութիւնից, որ սև ամպի նման անցաւ նրա գեղեցիկ դէմքի վրա։ Նա մի կողմ ձգեց լայն վերարկուն, որի մէջ փաթթված էր և ճակատից բարձրացրեց ահագին մորթէ գդակը, որ իջել էր մինչև աչքերը։ Նրա զէնքերը բաղկանում էին մի զոյգ ատրճանակից և ծանր խէնջարից միայն, որոնք իսկոյն յայտնվեցան, երբ նա վերարկուն մի կողմ ձգեց։

Նա աշտանակի վրայից առաց աղաւնաձև ճրագը և շտապով դիմեց դէպի տան տիրուհու սենեակը։ Այստեղ նոյնպէս ոչ ոք չը կար։ Ցնհանութիւնը, որ սկզբում առաջ եկաւ նրա մէջ անհամբերութիւնից, այժմ երկիւղի փոխվեցաւ։ «Ինչ եղաւ, ուր մնաց, ինչ պատահեց նրա հետ»—այդ հարցերն էին կարդացվում նրա տխրամած դէմքի վրա։

Եղել են ժամանակներ, երիտասարդական ջերմ, սիրաբորբոք հասակում, որ այդ մարդը ժամերով սպասել է նրան, որին այժմ անհամբերութեամբ կամենում էր տեսնել։—Սպասել է անտառի լռութեան մէջ, թաւուտ ծմակներում, ժայռերի քարանձաւներում։ Եւ նա, մի գիւղական դեռահաս աղջիկ, իր ծնողներից գաղտնի, շատ անգամ այցելել է նրան և իր կուսական անմեղ համբոյրներով քաղցրացրել է նրա առանձնութեան րոպէները։ Բայց երբէք նրա սիրտը այսպէս սաստիկ չէր բաբախել այն արարածի համար, որին այժմ մեծ անհամբերութեամբ սպասում էր։ Դա սիրոյ բոլորքը չէր, որ այնպէս սաստիկ յուզում էր, ալեկոծում էր նրա սիրտը։ Նա մինչև անգամ այդ րոպէում մոռացել էր, որ մի ժամանակ սիրել է նրան։ Դա մի մեծ ձեռնարկութեան այն դրութիւնն էր, երբ մի մարդից էր կախված նրա յաջողութիւնը կամ անյաջողութիւնը։ Եւ այդ ձեռնարկութիւնը պիտի կատարվէր այն կնոջ ձեռքով, որին մի ժամանակ սիրել էր նա։

Երիտասարդը կրկին դիմեց դէպի ներքնատունը։ Այստեղից ամենևին մօտ էր բակի դուռը, կարելի էր իսկոյն լսել, եթէ ամենաթոյլ կերպով անգամ բաղխելու լինէին։ Դեռ չը մտած ներքնատունը, նայեց դէպի երկինքը, տեսնելու, թէ գիշերվայ որ ժամն էր։ Երկինքը պատած էր նուրբ, սպիտակ շղարշի նման մառախուղով. աստղեր չէին երևում։ Այդ ամենի զայրացրեց նրան, աստղերից կարող էր գիտենալ ժամանակը։ Այդ միջոցին սկսեցին խօսել աքաղաղները։ Նա բարկութիւնից ամբողջ մարմնով դողաց։ Գիշերը թռչում էր...

Նա մտաւ ներքնատունը, ճրագը դրեց իր առաջվայ տեղում, սկսեց անհանգիստ կերպով անցուդարձ անել նեղ, խեղդող սենեակի մէջ։ «Ոչ, նա կը կատարէ... անպատճառ կը կատարէ... մտածում էր նա։ Նա ինձ մինչև այսօր էլ սիրում է. այդ սէրը նրան ուժ, եռանդ և վստահութիւն կը ներշնչէ։ Նա ինձ համար ամեն բան կանէ, միայն թէ կրկին կարողանայ գրաւել իմ սէրը։ Ա՛խ, եթէ կարողանար կատարել... ես նրան կրկին կը սկսեի պաշտել։ Մինչ հսկաները վառօդով և սրով են գործում, թոյլ կինը կարող է այլ տեսակ հրաշքներ գործել... Եւ այդ բանին ընդունակ է Սառան։ Ո՛րքան ուրախացաւ նա, որքան անհուն եղաւ նրա հրճուանքը, երբ լսեց իմ առաջարկութիւնը... Կարծես, սպասում էր մի մեծ զոհաբերութիւն յանձն առնել, միայն թէ կարողանայ ինձ մի որ և իցէ ծառայութիւն անել։ Բայց նա այնքան պաշտելի չէր լինի, եթէ այդ ծառայութիւնը կատարէր միայն իմ սէրի համար։ Նրա մէջ անգիտակցաբար եռ էր գալիս և մի բարձր, աւելի վեհ սէր,—ազգի սէրը։ Ո՞վ մոցրեց նրա մէջ այդ զգացմունքը։ Կարծում եմ, ոչ ոք։ Նա տեսաւ, որ իր սիրած տղամարդը նուիրված է մի գաղափարի, ինչու ինքը չը մատուցանէ մի և նոյն զոհը, երբ այդ կարող էր հաճելի լինել սիրած տղամարդին։ Կինը սիրում է հաճոյանալ. և սէրը, ճշմարիտ սէրը կարող է առաջնորդել նրան դէպի ամեն ինչ, որ բարձր է։ Մի լաւ գործ կատարելու համար նա անպատճառ պէտք է սիրէ. սէրի համար նա ամեն բան կանի։ Իսկ տղամարդից է կախված ուղղել նրա ճանապարհը թէ դէպի վատը և թէ դէպի լաւը»...

Կարծես, բակի դռանը մի ձեռք դիպաւ։ Նա ուրախութեամբ դուրս վազեց։ Մօտեցաւ դռանը։

—Ո՞վ ես, հարցրեց ներսից։

—«Նեռ»... լսելի եղաւ դրսից։

Երիտասարդը բաց արաց դուռը։ Երկուսը միասին խաւարի միջով անցան դէպի խորին ներք-

կեանքի ամեն ճիւղերը իրանց ձեռքը գցել և ամեն բանի մէջ առաջին դերը խաղալ....

Եւ ահա նոյն մարդիկ, նոյն համալսարանական գիւղացիները, որոնք անընդունակ յայտնվեցան գիւղացուն հասկանալ, դիտել և ուսումնասիրել նրա կեանքը, ըմբռնել նրա առօրեայ պահանջները, օգնել նրան, —նոյն մարդիկ, ասում ենք, կամենում են քաղաքային կեանքի ամեն ասպարէզներում առաջին դերը խաղալ և առաջնորդել մեզ:

Բայց հարցնում ենք. այն մարդը, որ իր շրջանում ոչինչ չէ կարող անել, ի՞նչ կարող է գործել մի այլ, իրանից բարձր շրջանի մէջ:

Այդ է պատճառը, որ մեզանում ոչինչ առաջ չէ գնում: Գիւղացին որ պատահմամբ բարձրագոյն ուսում է ստացել, այլ ևս անընդունակ է դառնում իր գիւղում գործելու, արհամարհանքով է վերաբերվում դէպի իր համաշիւղացիները, իսկ քաղաքում նա ամեն տեսակ ներելի և անները միջոցներով առաջին դեր է խաղում հասարակական և ազգային ամեն տեսակ ասպարէզներում:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ՁԱՔԱԹԱԼԻՑ մեզ գրում են դեկտեմբերի 6-ից: «Ահա եօթ տարի է որ մի այսպիսի ձմեռ չէինք տեսած, ինչպէս այս տարի: Ամսոյ 4-ից սկսեց ձիւն գալ երկու օր և մի գիշեր: Երբ դադարեց, չափեցինք. մի արշինի բարձրութիւն ունէր: Գիւղացիները պատմում են որ ձիւնը հասնում է մինչև գոտիները: Փայտը և ածուխը շատ թանգացել են:»

—

Լսում ենք որ երկուշաբթի օր ԹԻՖԼԻՍԻ հայոց մշակական թատրոնական խումբը ներկայացնելու է պ. Ալէքսանդր Քիչմիշեանի կոմէդիան «Օրիորդ Բէրոյեան» անունով: Մենք գիտենք որ պ. Քիչմիշեանը իր այդ պիէսան գրելուց առաջ դրեց մի քանի փոքրիկ կատրներ ժողովրդական կեանքից, ինչպէս «Գրօշ», «Կրակի շուրջը» և այլն: Բայց ինչպէս կաջողվի նրան մի բեմական դրուածք, այդ մասին մենք կարող ենք դատել միայն այն ժամանակ, երբ կը տեսնենք կամ կը կարդանք նրա պիէսան:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

—

Ֆինանսների մինիստրը դեկտեմբերի 10-ին ներկայացրեց սենատին առաջարկութիւն Ցունիսի արշաւանքի և երկու նոր մինիստրութիւնների համար կրեդիտ բանալու մասին: Դուքս դը-Բրոլի առաջարկեց հետևեալ հարցերը. արդեօք իրաւունք ունի՞ կառավարութիւնը նոր ծախսեր բանալ առանց պարլամենտի համաձայնութեան: Արդեօք կարո՞ղ է կառավարութիւնը, խաղաղ ժամանակի բիւդժետ ունենալով, շարունակել պատերազմը, թէ պէտք է խաղաղութիւն հաստատէ և արդեօք պարլամենտը պէտք է պահանջէ՞, որ նրա իրաւունքները յարգված լինեն: Ճառախօսը հրաւիրեց պարլամենտին ուշադրութիւն դարձնել Ցունիսի դրաման ձևի վրա: Այդ նշանաւոր հարցերը արժանի են, որ սենատը զբաղվի նրանցով այդպիսի մի ժամանակ, երբ նրան անպատուում են և ստիպում են ինքնասպանութիւն գործել: Բայց առաջին մինիստրը պահանջում է, որ սենատը այժմ այդ հարցը յետաձգէ, ինչպէս նոյնը նա պահանջեց պատգամաւորների ժողովից: „Առաջվայ մինիստրութիւնը այլ ևս չը կայ մեր առաջ, շարունակեց հեղնօրէն դուքս դը-Բրոլի, իսկ մեր նոր մինիստրը, կարծեմ գեղարուեստների, Անատոլէն Պրու, մի ժամանակ զեկուցանող էր Ցունիսի դաշնագրի մասին: Գամբետան էլ այնքան մօտ յարաբերութիւններ ունէր նախկին մինիստրութեան հետ, որ չէ կարող հեռացնել իրանից պատասխանատուութիւնը Ցունիսի գործերի համար: Դա միայն բարձրագոյն իրաւունք է:—Եւ բարձրագոյն անարդարութիւն, նկատեց Գամբետտա: Դուքս դը-Բրոլի համաձայն է Գամբետտայի հետ, որ անհրաժեշտ է պահանջել դաշնագիրը, բայց կարծում է, որ վերջը նա կարող է քննվել, ինչպէս Անգլիան վերաքննեց իր դաշնագիրը բօերների հետ: Ճառախօսի կարծիքով, կարելի է համբերել նոյնպէս և կառավարութեան դիպլոմատիական գաղտնապահութիւնը, միայն թէ նա ճշմարտութեան հակառակը չը խօսէր: „Մեզ անկարելի բան են առաջարկում, այն է, չը հաստատել Ցունիսի դաշնագիրը և հաւանութիւն չը տալ կրեդիտներին, եթէ մենք համաձայն չենք: Մեզ ցոյց են տալիս հերթական հարցերին անձնելու այն ձևը, որ ընդունեց պատգամաւորների ժողովը դեկտեմբերի 9-ին և որ մասամբ արդելք է դնում կառավարութեան քաղաքականութեանը: Բայց այդ ձևը ընդունվեցաւ ընդհանուր շփոթի ժամանակ, ինչպէս մի յուսահատ միջոց: Այժմ անկարելի է մերժել պահանջված կրեդիտը առանց վնասելու պատերազմական սովորական բիւդժետին:“ Այդ հիման վրա ճառախօսը պահանջում է առաջին մինիստրից ապագայում այլ ևս այդպիսի բաներ չանել: Բրոլի Գամբետտայի բացատրութիւնները պատգամաւորների ժողովի մէջ անբաւարար է համարում և կարծում է, որ Ցունիսի վրա հովանաւորութիւնը նոյնպիսի դժուարութիւնների հետ է կապված, ինչպէս որ նրա փոփոխելը Ֆրանսիայի հետ, իսկ այդ գործը պախարակում է ինքը Գամբետտա: Այդ բոլոր պատճառները ըստիպում են ճառախօսին ցանկանալ աւելի մօտ ծանօթութիւն Ցունիսի վերակազմութեան նախագծի հետ, որ իմանայ արդեօք այդ նախագիծը համապատասխան չէ հասարակ միացման: Պետութիւնները, վերջացրեց Բրոլի, որոնք ինձ պէս ոչինչ հասկացողութիւն չունեն Ցունիսի գործերի մասին, կարող են մտածել, որ Ֆրանսիան, իր համար ոչինչ գործ չը գտնելով Եւրոպայի մէջ, 30,000 զինուոր Ափրիկա ուղարկեց: Ճառախօսը դիտմամբ իր կարծիքները յայտնում է Գամբետտային, առաջ քան թէ նա նշանաւոր դիպլոմատիական կամ պատերազմական վճիռներ կը կայացնէ: Գամբետտա պատասխանեց, որ նա կարող է փարատել Դուքս դը-Բրոլիի հոգսերը և մի և նոյն ժամանակ ցոյց տալ, թէ ապագայում սենատը հանրապետական ձևով կազմակերպված, ինչ մեծ նշանակութիւն պէտք է ունենայ: Կառավարութիւնը ցանկանում է ամրացնել այս ժողովը և բարձրացնել նրա հեղինակութիւնը: „Դուքս դը-Բրոլի, շարունակեց Գամբետտա, յաջորդական մի օտարոտի թէօրիայի համեմատ ինձ պատասխանատու է դարձնում նախկին կառավարութեան գործողութիւնների համար: Շատ լաւ.—ինձանից հաշիւ պահանջեցէք, միայն թէ իմ սեփական գործողութիւնների համար:“ Անցնելով Ցունիսի հարցին, Գամբետտա նկատեց, որ այդ երկրի խաղաղացնելը ամենամօտ ժամանակում կը կատարվի: Փետրվարին նա պարլամենտին կառաջարկի կրեդիտ Ցունիսի վերակազմութեան մասին: Կառավարութիւնը յոյս ունի համաձայնութիւն կայացնել այն պետութիւնների հետ, որոնք շահեր ունեն Ցունիսի մէջ: Ցունիսի մէջ կարելի է նոյն բանն անել, ինչ որ Եգիպտոսում, որ ենթարկված է հասարակ հովանաւորութեան: „Դուքս դը-Բրոլի երկիւղ է կրում, որ մենք կը վնասենք Ֆրանսիայի կրեդիտին, ապահովելով Ցունիսի պարտքերը: Ես կարծում եմ, որ մենք չենք զրկի Ֆրանսիական աւանդութիւնները, ապահովելով մեր հայրենակիցների գումարները, որոնք օտար երկիրներում են պահված: Հաւատացէք, որ կառավարութիւնը ձեզանից ոչինչ չի ծածկի: Նա ցանկանում է, որ պետական գործերը ազատութեամբ քննվեն:“ Ինչ կը վերաբերի հարցի դիպլոմատիական մասին, Գամբետտա յոյս ունի, որ նրա կարգադրութիւնը ընդհանուր բաւականութիւն կը պատճառի: Անգլիայի և Իտալիայի հետ կարելի է այնպիսի համաձայնութիւն կայացնել, որ նրանց շահերը Ցունիսի մէջ համեմատ լինեն Ֆրանսիայի շահերին: Գամբետտա կարծում է, որ իտալացիները այն պատճառով անբաւական էին Ֆրանսիական քաղաքականութենից Ցունիսի մէջ, որ նրանց բացարձակ չը մեկնեցին Ֆրանսիայի իսկական նպատակները: „Դուքս դը-Բրոլի հարցնում է, շարունակեց Գամբետտա, թէ մենք ինչի՞ այնպէս չենք վարվում Ցունիսի մէջ, ինչպէս Անգլիան Տրանսվալի մէջ: Բայց մեր դաշնագիրը

նատունը: Նոր եկուորը նոյնպէս փաթաթված էր լայն վերարկուի մէջ: Նա դարձաւ դէպի առաջինը, հարցնելով:

—Դու մենակ ես այստեղ, խորէն հայր սուրբ:

—Մենակ եմ, իշխան, պատասխանեց խորէն հայր սուրբը:

Իշխանը երիտասարդ Ստեփաննոս Շահումեանն էր:

—Դեռ չի՞ վերադարձել տիկինը:

—Ես նրան սպասում եմ, պատասխանեց աբեղան և նրա ձայնի մէջ լսվում էր սրտի խորին անձկութիւնը:— Կարծում եմ, նա շատ չի ուշանայ, որտեղ որ է, շուտով կը յայտնվի:

—Այստեղ ամենայնիւ, ես երկար սպասել չեմ կարող, ժամանակը թռչում է, պատասխանեց իշխանը:— Դուք ինձ միայն այն ասացէք, վստահ էք, որ նա կարող է կատարել...

—Վստահ եմ:

—Այն աղախինը չի՞ խաբի նրան:

—Երբէք:

—Ինչ հիմք ունէք այսպէս կարծելու:

—Այն աղախինը, որին կոչում են Փարիշան, ազգով հայ է, բռնութեամբ մահմեդական են դարձրել: Նա շատ բարեկամ է Սառայի հետ, չեմ կարծում, որ նրան խաբէ: Նա սաստիկ տանջված է եղել հարեմի մէջ, այժմ, եթէ ոչ ընդհանուր գործի օգուտը, շատ հաւանական է, որ վրէժխնդրութեան զգացմունքը կը դրդէ նրան Սառայի խորհուրդը կատարելու: Ես կը հաղորդեմ ձեզ մանրամասնները, միայն խնդրեմ մի քանի րոպէով նստեցէք:

Իշխանը, թէև շատ չտապում էր, բայց հետաքրքրվեցաւ լսել մանրամասնութիւնները, որովհետև նրանք մի և նոյն գործին էին վերաբերում, որի համար շտապում էր նա:

Խորէն հայր սուրբը պատմեց խանի ամենասիրելի հարեմներից մէկի որդու ունեցած հիւանդութիւնը. պատմեց Փարիշանի գործ դրած խորամանկութիւնը հիւանդի կոկորդի վրա, որ նրանով ստիպեցնէ իր տիկնոջը անմիջապէս կոչել տալ Սառային որպէս բժիշկ: Պատմեց Փարիշանի միայնակ գալը Սառայի տունը և նրան իր հետ տանելը խանի ամրոցը:

—Դուք այստեղ էիք, երբ Փարիշանը եկաւ, կտրեց իշխանը խորէն հայր սուրբի պատմութիւնը:

—Այստեղ էի. ես որոշեցի թէ Սառայի և թէ Փարիշանի դերերը, թէ իրաքանչիւրը ինչպէս պիտի գործէ:

—Ինչպէս պիտի գործեն, հարցրեց իշխանը:

—Փարիշանը կը կատարէ այն, ինչ որ մենք մեր մէջ վճռեցինք... Իսկ Սառան կը բերէ ինձ զէնքի պահեստի բալանիները:

—Նրանք գիտեն մեր պայմանները:

—Գիտեն: Գործողութիւնները կը կատարվեն ճիշտ այն րոպէում, երբ կը տեսնեն բերդից օդի մէջ բարձրացած ֆշանքը:

—Շատ դեղեցիկ, ասաց իշխանը և մի և նոյն ժամանակ նրա սառն դէմքի վրա երևաց մի տեսակ ինքնաբաւական ցնծութիւն:—Մենք էլ այսպէս իմացում տուեցինք բէկին, ասաց նա, վերկենալով տեղից:

—Ինչ միջոցով, հարցրեց հայր սուրբը զարմանալով:

—Ցեր Աւետիքը տոմսակ գրեց:

—Ցոմսակ, ո՞վ տարաւ:

—Մի երիտասարդ, ականի միջով:

—Ականը արդէն պատրաստ է:

—Պատրաստ է: Աւելի քան յիսուն հոգի աշխատում էին նրա վրա:

Իշխանը աւելի պինդ կերպով փաթաթվելով իր վերարկուի մէջ, ահագին մորթէ գդակը քաշեց աչքերի վրա, և իր քայլերը ուղղեց դէպի բակի դուռը:

—Մենք այլ ևս չենք տեսնվի, հարցրեց հայր սուրբը նրան ճանապարհ դնելու ժամանակ:

—Տեսնվելու հարկ չը կայ, պատասխանեց նա շտապելով. — մեզանից ամեն մէկը գիտէ, թէ ինչ պիտի անէ: Ես այժմ գնում եմ տէր Աւետիքի մօտ հաղորդելու նրան ձեզանից ստացած տեղեկութիւնները, իսկ դուք կը սպասէք այստեղ մինչև Սառայի վերադարձը:

—Տէր Աւետիքը այժմ ո՞րտեղ է:

—Իզբաշի Սարգսի տունը. այնտեղ մարդիկ է պատրաստում...

Իզբաշի Սարգիսը բերդի մէջ բնակվող հայերի տանուտէրն էր:

Իշխանը դեռ չը դուրս եկած ներքնատից, կրկին դարձաւ դէպի հայր սուրբը, ասելով.

—Ի նկատի ունեցէք, հայր սուրբ, այստեղի հայ բնակիչների կեանքը կոտորածից ազատելու համար և մեր գործը դիւրացնելու համար անպատճառ պէտք է դրաւել զէնքերի պահեստը: Մենք կը յարձակվենք պահեստի վրա այն ժամանակ, երբ ամրոցի մէջ կը յայտնվի հրդեհը:

—Իսկ ես այդ միջոցին կը բաց անեմ ձեր առջև դռները....

—Ձեզ ծանօթ է ամրոցի դիրքը:

—Սառան կառաջնորդէ ինձ, նա բաւական ծանօթ է:

—Սնում է մի բան. մենք պէտք է դիտենանք ձեր գնալու րոպէն:

—Ես սպասում եմ Սառային, եկածին պէս ճանապարհ կընկնենք. և նոյն րոպէում մարդ կուղարկենք ձեզ իմացում տալու: Ձեր տեղը ինձ արդէն յայտնի է Իզբաշի Սարգսի տունը:

—Հէնց այնտեղ:—Բարի գիշեր:

Հայր սուրբը նրան ճանապարհ դրեց մինչև բակի դուռը և ետևից դուռը կրկին կողպեց:

—Այս գիշեր, ինչպէս երևում է, ես անդադար դռնապանի պաշտօն պիտի կատարեմ... ասաց նա իր մտքում, երբ կրկին վերադարձաւ ներքնատունը:— Կարծես, ճակատագիրը դրա համար է ստեղծել ինձ...

Եւ իրաւ, նա Ցաթևի միաբանութեան մէջ նոյնպէս դռնապանի պաշտօն էր կատարում. վանքի լուսարարն էր, բալանիները նրա մօտ էին պահվում:

Նա մի առանձին բաւականութեամբ սկսեց անցուդարձ անել սենեակում, շարունակելով իր խօսքը.

—Մինչև այսօր, ամեն առաւօտ, ամեն երեկոյ, բաց էի անում վանքի տաճարի դռները, ժամասէր միաբանութիւնը, մտնելով այնտեղ, աղօթում էր: Իսկ այս գիշեր կը բացանեմ խանի ամրոցի դռները և իմ ընկերները կը մտնեն այնտեղ կոտորելու համար...

—Ահա քեզ բալանիները... լսելի եղաւ մի ձայն նրա ետևից:

(Կը շարունակվի)

բէյի հետ շատ նման է Անգլիայի դաշնագրին բօերների հետ։ Ցունիսի գործին անչափ մեծ նշակութիւն է տուած. նրա ներկայացրած վտանգները չափազանցացրած են։ Մենք այդ արշաւանքի ժամանակ ընդամենը 1,100 մարդ կորցրինք, մինչդեռ ասում են, թէ անապատները մեր զինուորների մարմիններով են ծածկված։ Այսպէս թէ այնպէս Ցունիսի դաշնադիրը պարտաւորեցուցիչ է մեզ համար և մենք պէտք է կատարենք նրան մինչև այն ժամանակ, մինչև մեր յարաբերութիւնները բէյի հետ օրէնքով որոշված չեն լինի։ Դուքս դը-Բրոլիին հանգստացնելու համար կրկնում եմ, որ միճաբանութիւնների ազատութիւնը անձեռնամուխ կը մնայ։" Բրոլիի պատասխաններից յետոյ Գամբետտա նորից բարձրացաւ ամբիոն մի քանի բացատրութիւններ աւելացնելու համար։" Ես չառաջարկեցի, ասեց նա, որ Ֆրանսիան Ցունիսի մէջ հետևի Եգիպտոսի ֆինանսական կազմակերպութեանը, ես այդ օրինակով կամենում էի միայն ցոյց տալ, որ ֆինանսական հսկողութիւնը առանց միացման էլ կարելի է։ Դուքս դը-Բրոլի յիշեցրեց ինձ իմ խօսքերը, որոնց ես արտասանեցի անցեալ ծանր ժամանակներում։ (Բրոլիի մինիստրութեան ժամանակ)։ Ես այն ժամանակ կարծիք յայտնեցի, որ չափազանցեցրած քաղաքականութիւնը ներքին պատերազմ է յարուցանում, որի հետևանքը շատ անգամ օտարի յարձակմունքն է լինում։ Երկիրը հաւանութիւն տուեց ինձ այն պատճառով, որ ես տհաճութիւն յայտնեցի այդպիսի քաղաքականութեանը։"

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻ

—

Կ. Պոլիս, 28 Նոյմ. 81

Նոյեմ. 26-ին առաւօտուն Ղալաթիոյ Լուսաւորիչ եկեղեցւոյ շուրջը արտաքոյ կարգի շարժում մը կը տեսնուէր. պանդուխտ թէ պօլսեցի, վաճառական թէ արուեստաւոր, ուսեալ և անուս կը դիմէին ի Լուսաւորիչ. մենք ալ ունինք մեր խորհրդարանական մեծ օրերը, grande journée parlementaire։ Երեսփոխանք հեռագրեալ կուգան, ոմանք արտաքոյ կարգի լուրջ դէմքով, ծաղրելի ըլլալու չափ։ Սպառնական լուրեր կը պտըտին. երեսփոխան մը արդէն հայրենեաց նախապատրաստ նահատակի մը կերպարանքը կը շրջի։—Ժողովուրդը տխուր է. օրը՝ առանց արևի, առանց անձրևի, սրտերու թախիծը կաւելցնէ։ Եւ ինչպէս հնար է ուրախ ըլալ. Թիւրքերի խարազանին ներքև միայն հայը մնաց բազմաթիւ քրիստոնեայ ստրուկ ժողովուրդներէ, այն հայը որ այդքան մեծամեծ յատկութիւններ ունի և արևելքի մէջ քրիստոնեայ քաղաքակրթութեան տարածելու ամենայարմար ժողովուրդն է։ Ժամը 10 է, երեսփոխանաց ամենատուար մեծամասնութիւնը իրենց աթոռները նստած են։ Դասին մէջ գեղեցիկ սեռի ներկայացուցիչներն կը տեսնուին, Ազգանուէր հայ տիկնանց ընկերութեան ներկայացուցիչք։—Պ. Փափազեան բացակայ է։—Պ. Յ. Մերիէմ-գուլի կը բազմի նախագահական թիկնաթոռը. ատանդական զանգակը կը հնչեցնէ, «էֆէնդիներ, ատեանը բացուած է»։

Պ. Ատենապետը կը յայտարարէ թէ այն աւուր նիստը միայն պատրիարքի հրաժարականի խնդրոյն պիտի նուիրուի, և կը սկսի ներկայացնել ս. պատրիարքի հրաժարականները։ Կը կարդայ հետևեալ հրաժարագիրը, զոր ս. պատրիարքը խրկած է առ ազգ. ժողովոյ ատենապետն պ. Յ. Մերիէմ-գուլի։

«Վսեմապատիւ ատենապետ էֆէնդի ազգային ընդհանուր ժողովոյ։—

«Յայտնի է ամենեցուն իմ անձնական տկարութիւնս. մինչև ցարդ բազմաթիւ հրաժարականներ անընդունելի եղան ժողովին կողմանէ, այլ չը կրնալով տակալ այլ ևս այս պաշտօնին՝ որ հիւանդ մարդու մը համար խիստ ծանր է, և հաւատալով որ ալ ներողամիտ կը գտնուիք նուաստիս, այսօր Բ. Դուռն ուղղեցի իմ հրաժարականս, յանձնելով իմ սիրելի ազգս օգոստափառ սուլթանին գթութեան։

«Ձեր և պատկառելի ժողովրդ յայտնի է որ ես բազմաթիւ թերութիւններ ունեցայ իմ տկարութեանս, և գրեթէ անփորձութեանս պատճառաւ. այլ ես ակամայ ընդունած էի զայս պաշտօն՝ ստիպեալ ի բուռն թախանձանաց ազգայնոց և ժողովրդ. այն ժամանակները տաղնապալից էին. օրհնեալ է Աստուած, այժմ խաղաղութիւն է. հիմա աւելի փորձառու, աւելի կորովամիտ մէկը ընտրել պէտք է այս պաշտօնին, զի իմ մնալս ալ այսուհետև յոյժ վնասակար է ազգին՝ ամեն տեսակէտով։

«Ձեր ներողամտութեամբն ութ տարի չափ ակամայ վարելով զայս պաշտօն՝ ներումն կը խնդրեմ իմ պակասութեանց, ազգաց և ազանց յափտեռական Հօրմէն իմ սիրելի ազգիս անսպառ օրհնութիւն և երկար երջանկութիւն մաղթելով, կը խնդրեմ ժողովէդ որ իրր անկշիռ բարերարութիւն և վարձատրութիւն նուաստիս, այլ ևս իմ խօսքս չընէք։ Ազօթարար (ստորագրեալ) Ներսէս Եպ. Վարժապետեան։

Ա. Գ.—Թէ պատկառելի ժողովէդ և թէ վարչական խորհրդոյ անդամակից պատուական ընկերակիցներէս, եկեղեցական և աշխարհական ամեն վատակակից եղբայրներէս յանհունս գոհութիւն կը յայտնեմ և վասն ամենեցուն աղօթող եմ։ (ստոր.) Ն. Ե. Վ.

Ինչպէս գիտէք պատրիարք սրբազանը երկու հրաժարական խրկած է Բ. Դուռը, մին ծանր լեզուով և պատճառաբանեալ, միւսը պարզ։ Պ. Մերիէմ-գուլի ներկայացուց ժողովին պարզ հրաժարագրին հետևեալ թարգմանութիւնը։

«Վսեմաշայլ տէր. Ինչպէս գիտէ ձեր վսեմութիւնը, գրաւոր և բերանացի կերպով խնդրած էի քանիցս ընդունել իմ հրաժարականս պատրիարքական պաշտօնէն, որ յանձնուած էր ինձ և զոր կը վարէի անարժանապէս։

Սակայն անձիս տկարութիւնը օր քան զօր կը սաստկանայ, և ես անձամբ անկարող եղած եմ ըստ արժանւոյն վարել նոյն պաշտօնը, ուստի կաղաչեմ որ չնորհ ընէ օգոստ. սուլթանն ընդունել իմ հրաժեշտս և արձակել զիս պատրիարքական պաշտօնէն, չը զրկելով իմ ազգս իւր գորովալիր ակնարկէն, որուն կը կարօտինք յարաժամ։ 14 Նոյմ. 1881. (ստոր.) Ներսէս.

Պ. Ատենապետը կը յայտարարէ թէ այս հրաժարականը ինչ չափ վիշտ կը պատճառէ հայ ազգին. և կը ներկայացնէ այն հանրագրերը զոր Կ. Պոլսոյ թաղերը ժողոված են Ներսէս սրբազանի հրաժարականի դէմ։ Յասը հազարէն աւելի ստորագրութիւններ կան։ Որչափ սրտաշարժ բացատրութիւններ, ինչ պարզ և անկեղծ խօսքեր ժողովուրդի կողմէ։ Կարծես թէ Ներսէսի հրաժարելովը ժողովուրդը կը զգայ թէ որբ և անտէր պիտի մնայ։—

Այս հանրագիրները կարդալով պ. Ատենապետը կը յայտարարէ թէ ատանք ո և է ազդեցութիւն մը չեն կրնար ունենալ ժողովոյ որոշմանց վրայ, այլ կը նկատուին ժողովուրդի փափաքանաց արտայայտութիւնը, զոր ժողովը ի նկատի կառնու։—Պ. ատենապետը այս յայտարարութիւնը ազատօրէն կրնար ընել, վասն զի գիտեր թէ ժողովքն ալ ժողովուրդէն տարբեր բան մը չը խորհեր։

Նոյեմ. 23 թուական նամակով հաղորդած էի թէ երեսփոխանք նախ մէջերնին համաձայնութիւն մը գոյացնելու հարկը կը տեսնեն և ապա ժողովքի դալ և թէ չարաթ օր, Նոյեմ. 21, գիւանները այս համաձայնութիւնը գոյացուցին։—Հրաժարականի խնդիրը գրեթէ այս եղանակաւ վերջանալը յայտնի եղաւ, երբ պ. Ատենապետը յայտարարեց թէ. «գիւանները նախապէս բանաձևի մը վրայ համաձայնութիւն գոյացուցած են և թէ ժողովը ուղէ զայդ լսել ու ատոր վրայ քուէարկել, խնդիրը պարզ կերպով կը վերջանայ։— Բանաձևի խմաստ էր թէ ժողովը Ազգ. Վարչութեանն և ատենապետայ գիւանին կը յանձնարարէ պատրիարքի հրաժարականին պատճառները բառնալու միջոցներն ի գործ դնել և պատրիարքը կարենայ Աթոռին վրայ անխախտ մնալ։— Ահաւասիկ այդ բանաձևի օրինակը։

«Ազգ. ժողովս խորին յուսով կը լսէ թէ Ս. Պատրիարք հայրն հրաժարական մատուցած է Բ. Դրան, և նորին սրբազնութեան վրայ՝ որ ազգին ու երկրին չահերուն միանդամայն անձնուէր է, իւր համակրանաց ու վստահութեան արտայայտութիւնն անդամ մի ևս կրկնելով, կը յանձնարարէ իւր ատենապետայ գիւանին և վարչական խորհրդոյն՝ տեղեկանալ այն պատճառներուն, որք ըսել կուտան ս. պատրիարք հօր թէ՝ իւր պաշտաման շարունակութիւնը վնասակար է ազգին, և ի գործ դնել յանուն ազգին ինչ ձեռնարկ որ հարկ և պատշաճ է նորին սրբազնութեան արդիւնաւէտ պաշտօնավարութիւնն արգելող պարագայները բառնալու և հետևապէս ժողովրդեան սիրելի պատրիարքին յիւր աթոռ դարձնելու համար։»—

Երբ սոյն բանաձևը կարդացուեցաւ, ամեն կողմէ երեսփոխանք քուէ, քուէ կը պոռան. բանաձևը քուէի կը տրուի և կընդունուի միաձայնութեամբ։

Առեանը կը փակուի։—Երբ ժողովը ցրուեցաւ, ժողովուրդի մէջէն շատերը կարծիք կը յայտնէին թէ Ազգ. ժողովը լաւ կընէր եթէ պարզապէս մերժէր պատրիարքի հրաժարականը, որով Բ. Դրան ապղարարութիւն մը ըրած կըլլար։— Սակայն այս կարելի էր ընել երբ պատրիարքը միայն ժողովին տուած ըլլար հրաժարականը։ Եթէ Բ. Դուռը Ազգ. ժողովոյ սպառնական քուէին կարևորութիւն չը տար և Սուլթանը ընդունէր հրաժարականը, Կ. Պոլսոյ ժողովուրդը պատրաստ էր ազատ միջոցներու դիմել. ոչ,—ուրեմն Ազգ. ժողովը պարտաւոր էր շատ խոհեմ և խմաստուն կերպով շարժիլ, քանի որ բացարձակ զօրութիւն մը չունի։ Եւ արդէն այս կէտերը նախապէս լիովին բացատրուած է «Մշակի» ընթերցողաց։ Այս խնդրոյն մէջ Ազգ. վարչութեան ատենապետ պ. Եուսուֆեան և Ազգ. ժողովոյ ատենապետ պ. Ա. Մերիէմ-գուլի ամեն ջանք ըրին որ խոհական կերպով գործեն և առաջնորդեցին դիւանները ու ժողովին ճարտար կերպով։—

Ժողովոյ փակումէն վերջ խորէն սրբազան և պատրիարքական նախկին փոխանորդ Տէր Մկրտեան հայրը այցելութեան կերթան ս. պատրիարքին։ Ս. պատրիարքը չնորհակալութիւն կը յայտնէ որ Ազգ. ժողովը մինչև նեցուկ եղած է և մերժած է իր հրաժարականները, բայց այս անգամ ինքն առջի անգամներուն նման կարող չը պիտի ըլլայ հրաժարականը ետ առնուլ։ Երկու եկեղեցականաց բարեկամական թախանձանքները արդիւնք մը չեն ունենար։ Երեկոյին խորէն սրբազանի հետ տեսնուեցայ, չուարած մնացեր է թէ ինչ պիտի ընեն եթէ պատրիարք սրբազանը հրաժարականին վրայ պնդէ. մենք որ քաղաքական տեսակէտներով կը նկատենք պատրիարքի հրաժարիլը, խորէն սրբազան ատոր վրա աւելցուց եկեղեցականաց վերաբերեալ տեսութիւններ, և կղերական դասուն բարեկարգութեանը իսկ անհրաժեշտ կը գտնէր պատրիարքի հրաժարիլը։— Իրաւունք չատ մխիթարական է հանդիպել այսպիսի բարձրատիճան եկեղեցականաց, ինչպէս խորէն սրբազանը, որ խնդիրը երբ ազգային շահուց կը վերաբերի ամեն անձնական նկատում կը զոհեն և անկեղծ կերպով ազգի շահը կը խորհին։ Խորէն սրբազանի հետ տեսակցութիւնս տիսրում մը տուաւ ինձ ում անչուշտ պիտի մատնակցին «Մշակի» ընթերցողք, երբ Բարդուղիմէոսներու նենգութիւնները այնքան զայրոյթ ու վիշտ կը պատճառէ։—

Ազգ. ժողովոյ յանձնարարութեան համեմատ ատենապետաց գիւանը և վարչութիւնը ներկայացան երէկ սրբազան պատրիարքի։ Երկար բանակցութիւնք տեղի կունենան. սրբազան պատրիարքը կը յայտարարէ թէ ինքն միշտ այն համոզման մէջ է որ իր պատճառովն է, որ Բ. Դուռը անվստահ աչք կը նայի ազգին վրայ։—Ազգին ներկայացուցիչք կը ջանան զինքն այդ համոզումէ ետ կեցնել, բայց անհնար կըլլայ. ատենը տարաժամած ըլլալուն, կը վերադառնան։ Պատրիարքի տուած պատճառներուն մէջ այնպիսի կէտեր կան, որ ծանր խորհրդածութեանց նիւթ կը մատակարարեն, կան կէտեր ալ որ կըրնան երկրորդական նկատուիլ։ Ազգին ներկայացուցիչք այս շաբթու պէտք եղած աշխատութիւնները պիտի ընեն։—Բայց բան մը ամենէն աւելի անանց աչքին կը զարնէ. Բ. Դուռը պիտի ըսէ երբէք թէ պատրիարքի պատճառովն է որ այսքան թշնամական կերպով կը վարուի հայոց հետ. այս բանս մտքէ անցնելն իսկ ապայութիւն է։—Բ. Դուռը պիտի ըսէ թէ ինքն միշտ ազնիւ վարված է, թէ ինչ որ օգտակար դատած է՝ ըրած է և նոյնը պիտի ընէ այսուհետև ալ։—Պատրիարքն ալ հակառակը պիտի պնդէ, այսպէսով անելանելի ճամբու մը մէջ պիտի մնանք։—Զեռքերդ չիմ Մանկունի սրբազան։

Սակայն այս երեկոյ «Մասիս» կը հաղորդէ թէ Սաիդ բաշա հրաւիրեր է պատրիարքը տեսակցութեան։—Ինչոր հաստատով կրցանք իմանալ սա է թէ Սաիդ բաշա չը պիտի ուզէ այս խնդիրն շատ ծանրացնել, պատրիարքին հետ անուշ տեղը կապել պիտ ուզէ, թերևս այսպիսով հայոց սիրտն ալ յուսայ շահել։ Այս վերջին տեսակցութեան և անոր վերաբերեալ կտորն դեռ ստուգութեան կարօտ են, թէպէտ և շատ հաւանականութիւն կայ ճիշդ ըլլալուն։

Երկրորդական խօսք մ'ալ։—Երէկուան «Մասիսի» մէջ յօդուած մը կայ ինձ անհաճոյ։ Այդ յօդուածը կարելի է «Մշակի» ընթերցողաց ամենքն ալ «Մասիս» չը կարդան, ներփակեալ կը խրկեմ «Մշակի»։

Հայկակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Ռէյտերի ընկերութեանը» Կ. Պոլսից հեռագրում են, դեկտեմբերի 9-ից հետևեալը։ «Յարգելով այն բազմաթիւ պէտիցիաները, որոնք ստացվեցան հայոց ազգային ժողովի մէջ, նա այսօր մէկ պատգամաւորութիւն ուղարկեց Ներսէս պատրիարքին խնդրելով, որ նա բացատրէ իր գործերից հեռանալու պատճառը. մի և նոյն ժամանակ պատգամաւորութեանը յանձնված է, եթէ կարելի է, համոզել նրան չը թողնել իր աթոռը։ Եթէ Ներսէս պատրիարքը կը պնդի իր հրաժարականի վրա, այն ժամանակ, ասում են, որ հայերը նրան կրկին կընտրեն իրանց պատրիարք։»

—Լրագիրները հաղորդում են, որ Իրլանդիայում առաջման պէս չարունակվում են սպանութիւններ և հրդեհներ։ Յայտնված է նոյնպէս որսորդութեան արգելումը, բայց իրանք ֆէրմերները և երկրագործները սկսում են մեծ որսորդութիւններ կազմակերպել, ինչպէս որ դեկտեմբերի 9-ին Դերբիսիրում եղաւ։

—«Новое Время» լրագրին Վիէննայից հեռագրում են դեկտեմբերի 1-ին։ Ռինգի վրա թատրոնի մէջ պատահած հրդեհի առիթով քրէական հալածանք կը սկսվի այն բոլոր անձանց դէմ, որոնց անփոյթութիւնը և պարտաղանցութիւնը կը յայտնվի քննութեամբ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 դեկտեմբերի։ Որովհետև Ցաշկենտը շատ հեռու է չինական սահմանից, հիմնվում է մի նոր գլխաւոր նահանգապետութիւն, որ կը կազմեն արևմտեան Սիբիրի մի մասը, Սեմիրեչիէ, և Կուլջայի ռուսաց մասը։ Գլխաւոր-նահանգապետ կը նշանակվի գեներալ Զերնիաչեվ։ Զինուորական վերանորոգութիւնների նախագիծը հիանալի է. լինելու են զինուորական չորս շրջաններ կամ բանակները՝ Հիւսիսային, Արևելեան, Արևմտեան և Հարաւային, բացի Սիբիրի զօրքերից։ Այնուհետև եւրոպական Ռուսաստանի զօրքերի համար կազմվում են տեղական զօրաբաժիններ, որոնցից իւրաքանչիւրը կունենայ իր ինտենդանտութիւն, արտիլերիա և ինժեներների վարչութիւն. վերջապէս կատարվելու է նշանաւոր հակակենտրոնականութիւն։ Սպասում են, որ յունվարին երկու մասնաժողովներ կը կազմվեն. մէկը այդ վերանորոգութիւնների հիմունքները մշակելու համար, երկրորդը կը կազմէ զօրքերի ապագայ վարչութեան կանոնագրութիւնը։ Զօրքերի առողջապահական մասերը վերանորոգութեանը կենթարկվեն։ Առողջապահական ամբողջ բաժինը կենտրոնացած կը լինի մի կառավարչի ձեռքին, որ շաբաթի հրամանատարին հաւասար իրաւունքներ կունենայ։ Նրան կը հպատակվեն հիւանդանոցների տեսուչները, զինուորական բժշկական տեսուչը և կարմիր խաչը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 դեկտեմբերի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 93 ր. 75 կ., երկրորդ 90 ր. 75 կ., երրորդ 91 ր. 25 կ., չորրորդ 90 ր. 62 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 224 ր. 25 կ., երկրորդ 216 ր. 25 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ր. 25 կ., երկրորդ 90 ր. 25 կ., երրորդ 90 ր. 25 կ., ոսկի 7 ր. 81 կ։ Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ 25,35 պէնս։ Բօրսայի տրամադրութիւնը հանգիստ է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

144 Արծրունու գալերէա 144
ամենաէժան պահեստ
մեբէլի և հայելիների։

ԲԱԹՈՒՄԻ
ԿՕՄԻՍԻՕՆԷՐ
ԱՐՇԱԿ ԾԱՏՈՒՐԵԱՆՑ

ընդունում է ամեն տեսակ պատուէրներ, յանձնարարութիւններ և ապահովութիւններ։ 9—20

ՄԻՔԱՅԷԼ ՍԱՐԳՍԵԱՆ ԽՈՒԲԼԱՐԵԱՆՑ և ԳԱԲՐԻԷԼ ԱՒԵՏԻՔԵԱՆ ԱԽՎԵՐԴԵԱՆՑԸ յաւօք սրտի յայտնելով առաջինը իւր կնոջ և երկրորդ իւր քերդասեր ՆՈՒՆԷ ԵԳՕՐԵԱՆ ԽՈՒԲԼԱՐԵԱՆՑԻ մահուան մասին, խնդրում են ազգականներին և ծանօթներին իրենց ներկայութեամբ պատուել յուղարկաւորութեան հանդէսը, որ տեղի կունենայ կիւրակէ 13 դեկտեմբերի 10 ժամ. առաւօտ. Խուբլարեանցի բնակարանից (Մեշչանսկի և կատոլիչեսկի փողոցների անկիւնը) Մօղնու ս. Գէորգ եկեղեցին։ 1—1

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ

Պ. ԲԷԿԽԱՆՕՎԻ, Պ. ԿՕԿՁԱԵՎԻ և ԸՆԿ. Մագատօվսկայա փողոց, Ալէքսանդրիան այգու դիմաց Աբօվեան եղբայրների տանը։

ԱՌՆՈՒՄ Է և ծախում է 5% տոմսակները 1 և 2 փոխառութեան։ Ցանկացողներին յետաձգում է վճարը 12 ամսով, ընդունելով 25 բէհ։ Տարած գումարը և կուպօնները պատկանում են առնողին գնելու օրից։

ՓՈԽ Է ՏԱԼԻՍ փողեր տոմսակների գրաւականով։

ԱՊԱՀՈՎՈՒՄ է երկու փոխառութիւնների տոմսակները հանգչելուց 50 կոպէկով։

ԸՆԴՈՒՆՈՒՄ է փողերը գնումներով և ընթացող հաշուով։ 1—3

ԹԷՅ ՍԻՐՈՂՆԵՐԸ ԵՒ ՃԱՆԱՉՈՂՆԵՐԸ պէտք է գնեն **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ թէյ լաւ տեսակի ֆունտը 1 ր. 20 կ. և 2 ր. և համեմատեն առաջինը 1 ր. 60 կ. հետ և երկրորդը 3 ր. հետ ամեն տեղ **ԹԻՖԼԻՍՈՒՄ**, որպէս զի իմանան Անգլիական խանութի մէջ ծախվող ամեն տեսակ թէյի համեմատական **ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԻՒՆԸ**։ Բացի այդ Անգլիական խանութը կշռում է **ՄԱՔՈՒՐ** թէյ առանց **ԹՂԹԻ** և **ԱՐՃԱՃԻ**։ 93—100

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ներկայ տարուայ հոկտեմբերի 1-ից բանալով ԵՐԵՒԱՆՈՒՄ գրավաճառանոց, նոյնպէս և ուսումնարանական, նկարչական և կազմարարական պիտոյից իրեղէնների խանութ, հրաւիրում եմ գրաւոր աշխատանքների հեղինակներին, թարգմանիչներին, հրատարակիչներին և լրագրական խմբագիրներին (թէ հայ և թէ ռուս լեզուներով) ուղարկել ինձ վաճառելու իրենց աշխատութիւնները **ԿՕՄԻՍԻԱՑՈՎ**։ Իմ հասցէն. г. Эривань, Нерсесу Симеонянцу, магазинъ „Другъ Дѣтей.“ 1—10

ՌՈՒՍԱՑ ԱՊԱՀՈՎԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ԿՐԱԿԻ դէմ ապահովում է շինութիւններ, ապրանքներ, պահեստներ, գործարաններ գիւղատնտեսական շինութիւններ և մթերքներ։ Կովկասի համար գործակատար Պ. Ֆ. ԲԵԺԱՆԲԵԿ։ Դրասենեակը գտնվում է Երևանսկայա հրապարակի վրա քաղաքային տան մէջ առաւօտեան 10—2 ժամը և երեկոյեան 6—8 ամեն օր։ ՓՈԽ-ԳՈՐԾԱԿԱՏԱՐՆԵՐ. Քութայիսում Հ. Պ. ԲԷԺԱՆԲԵԿ, Փոթի Ի. Գ. ՀԱՍԱՆ-ԶԱԼԱԼԵԱՆ, Ախալցխա Պ. ԶԱԹԱԼԲԱՇԵՎ։ Նոյն տեղը ապահովում են ներքին 5% առաջին և երկրորդ փոխառութեան ՏՈՄՍԱԿՆԵՐԸ 55 կ. Ս. Պետերբուրգի Ի. Վ. ԻՒՆԿԵՐ բանկային տան յանձնարարութեամբ։ (Հ. շ.)

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 25% ԷԺԱՆ քան թէ ուրիշ տեղ. ԹԷՅ, կակաո, ՇՈԿՕԼԱԴ, բիսկվիտներ, մուրաբաներ, բրինձ, ամաններ, բաժակներ, բօկալներ, թէյամաններ, սուրգոկներ, ՄԱՏՈՒՑԱՐԱՆՆԵՐ, երես լուանալու ամաններ, ԿՈՂՊԷԿՆԵՐ, ՋԳԵՍՏԱԿԱԽՆԵՐ, գդալներ, դանակներ, ԳՐԻՉՆԵՐ, թուղթ, ծրարներ, տետրակներ, մատիտներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ, մէջքակապներ, կլէօնկա, ԹԱՄՔԵՐ, սանձեր, ուլթօներ, ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, երեսբրիչներ, թաշկինակներ, կանանց գուլբաներ, մարդկերանց գուլբաներ, տուպլետի սապօն, հոտաւէտ ջրեր, շերբետ, ցիտրան մագնեզիա, խինայի գինի, պօրտվէյն, խերես, կօնիակ և 1,000 այլ առարկաներ։ **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ։ ՆՈՅՆ ՏԵՂԸ** վաճառականներին **ՄԵԾ** քանակութեամբ ծախվում է **ԹԷՅ**. պուդերով 40, 46, 52, 58, ր., իսկ ֆունտերով 1 ր. 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ. և 1 ր. 80 կ., իսկ ամենաբարձր թէյը ֆունտը 2 ր. քաշը ԱՌԱՆՑ ԹՂԹԻ։

ՀՐԱՑԱՆՆԵՐ 20—60 ր. և ՁՕԿ-ԲՕՐ (chokl bore) George Dau-ի գործարանից 120 ր., րէվոլվերներ 4—34 ր., ԲՈՒԼԴՕԳ (bull dog) 11—20 ր., կանանց թամբեր 65 ր., շեֆիլդի դանակներ 3 ր. 50 կ. դիւժինը, ալբոմներ կիսագնով, ֆիլարներ և այլն։ Ամենամեծ պահեստ հրացանների և րէվոլվերների Թիֆլիսում։ 68—100

Վաճառվում են 15,000 ամաններ առաջին տեսակի 15 կ. հատը, 12,000 խրուստալի բաժակներ 25 կ. հատը, 10,000 բօկալ և բաժակներ 10 կ. հատը, 10,000 մատուցարաններ և կողպէքներ 15 կ. հատը, 10,000 ասեղ 8—40 կ. հարիւրը, 10,000 պենալներ 5 կ., 5,000 շիշ պօրտ-վէյն և խերես 1 ր. հատը, 2,000 արշին կլէօնկա 60 կ.—2 ր. արշինը, 2,000 դիւժին մատիտներ և գրչակոթեր 8 կ. դիւժինը, 2,000 ֆ. հնդկական բրինձ 7, 8 և 10 կ. ֆունտը, 1000 ֆունտ լէպէօշկա 50 կ. ֆունտը, 600 անգլիական բէվօլվեր ներ 4—34 ր. հատը, 300 անգլիական հրացաններ 20—100 ր. հատը, դրապ, տրիկօ, տլբօներ, ձմեռվայ պալտօներ, գլխարկներ, փարտիկներ, հագուստ կէս գնով։ Ծախվում է **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ։ Նոյն տեղը ծախվում է ծովային **ԽՈՏ** պուդը 2 ր. 50 կ.։ 20—60

ՎԻԼՆՆԱՑԻ ՄԵԲԷԼ (աթոռներ և բազկաթոռներ) ծախվում են մեծ քանակութեամբ և մանր, միջի փողոցում կատոլիկոց փողոցի անկիւնում ՄԻՔԱՅԷԼ ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ պահեստում։

Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցէով. Тифлисъ, Михаилу Н. Теръ-Никогосову. 116—150

Վերականգնեցնող **ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ**, մազերը ամրացնող և նրանց **ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ** վերադարձնող։ Գինը 2 ր. շիշը, **ՓՈՍՏԱՅՈՎ** ուղարկված 2 ր. 49 կոպ. **ԱՆԳԼԻԱԿԱՆ** խանութի մէջ։

Սի և նոյն տեղը **ԽԻՆԱՅԻ ԻՒՂ**, մազերը ամրացնելու համար, 1 ր. ամանը վրձին զլխայաւի դէմ, **ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՕՆ** և հոտաւէտ ջրեր և այլն։ 54—100

ՇԻՐԱԿ՝ տեղագրութիւն պատկերացոյց, հաւաքեց Հ. Ղ. Ալիշան

Մանրամասն և հարազատ հետազօտութիւն Շիրակ գաւառի, գեղեցիկ քարտէզով և շքեղ պատկերներով զարդարուած։—Հ. Ալիշանի այս վերջին աշխատասիրութիւնը ամենապատուաւոր և առաջնակարգ տեղ պէտք է բռնէ ոչ միայն նոյն հեղինակի մինչև այժմ լոյս տեսած ընտիր երկասիրութիւնների մէջ, այլ և հայկական համայն գրականութեան ծանրակշիռ զարդերից մինը պիտի համարուի։ Ամենայն հայ, որի համար թանգ է իր ազգի անցած գնացած փառքերի նշխարների հետազօտութիւնն ու մշակութիւնը, ագահութեամբ պիտի ձեռք առնէ և իր զրասեղանի անհրաժեշտ սեպհականութիւններից առաջինը պիտի դարձնէ սրան։ Գինն է 10 ր. Ճանապարհի ծախքը 50 կոպ.։

ԳՐԻՉ ԵՒ ՍՈՒՐ՝ պ. Մինաս Չերազի վերջին գրուածքի առաջին հատորն է, որի մէջ յօրինողը շարունակում է այն բանակռիւը գրաբառը պաշտպանողների դէմ, որի սկիզբը ծանօթ է մեզ իւր դատապարակութիւն անունով գրքից։ Բացի լեզուագիտական հակիրճ և ազդու յօդուածներից, այս գրքոյկի մէջ ընթերցողը կը գտնէ տեղեկութիւններ նաև ուրիշ մի քանի հետաքրքիր հարցերի վերաբերութեամբ։ Գինն է մէկ ռուբլի. Ճանապարհի ծախքը 10 կ.։

վաճառվում են

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ։

ՆՈՐ ԴՈՒՐՍ ԵԿԱԾ ԳՐՔԵՐ

Որոնք վաճառվում են ԶԱՔԱՐԻԱ ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ „ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

1	Բազրատունի՝ Տան պատգամք. գինն է	25 կ.
2	Աղայեանց՝ Անահիտ, հին զրոյց.	50 „
3	Թղուկ, Թարգ. Տէր-Միքայէլեանցի.	30 „
4	Աղքատ մանուկ կամ բարոյական վէպ.	20 „
5	Խաթաբալա Սունդուկեանցի.	50 „
6	Զորս մանրավէպ Տէր-Աւետիսեանի.	20 „
7	Հայերէն լաւս երեխաների համար.	50 „
8	Տէր-Ակորեանց՝ Հայաստանի աշխարհագրութիւն.	60 „
9	Կոստանեանց՝ Գրաբառ բայերի խմբհարումը.	25 „
10	Թադեորեան՝ Փոքր լեզուագիտական հետազօտութեան.	50 „

Եւս ստացուել է Բոստովի Տէր-Աբրամեանցի 1882 թուի **ՕՐԱՑՈՅՑ**, գինն է 15 կոպ. գումարով առնողներին զիջում կը լինի։

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1882 ГОДЪ

На ежедневную политическую и литературную грузинскую газету

ДРОЭБА

Газета **„Дроэба“** будетъ выходить ежедневно въ форматѣ газетъ средней величины, по слѣдующей программѣ: Телеграммы.—Передовыя статьи по важнѣйшимъ вопросамъ грузинской, русской и заграничной жизни.—Сообщенія и извѣстія.—Провинціальныя корреспонденціи.—Корреспонденціи и извѣстія изъ Россіи и Европы.—Фельетоны изъ общественной жизни.—Судебный отдѣлъ.—Педагогическій отдѣлъ.—Библіографія.—Статьи по исторіи и этнографіи Кавказа и въ особенности Грузіи.—Разныя извѣстія объ открытіяхъ и изобрѣтеніяхъ.—Объявленія казенныя, торговыя и частныя.

ПОДПИСНАЯ ЦѢНА

Съ пересылкой и доставкой въ гор. Тифлисѣ и друг. города.

На годъ	9	руб.
„ полгода	5	—
„ 3 мѣсяца	3	—
„ 1 мѣсяцъ	1	—

Подписка принимается: въ Тифлисѣ, въ конторѣ редакціи, Головинскій проспектъ, д. кн. И. К. Мухранскаго.

Иногородные адресуются: Въ Тифлисъ. Въ редакцію **„Дроэба“**

Редакторъ *Серг. Месхи.*

Издатель *Ст. Меликовъ.*

3—3

Дозволено цензурою, Тифлисъ 11 Декабря 1881 года.

Типографія Главнаго Управленія Намѣстника Кавказскаго.